ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևան, Կառավարական տուն 3

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ N 225

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձանց ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնի վերաբերյալ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ

(ծածկագիրը՝ 3.1-499)

Բաժնի առաջատար մասնագետը՝

ա) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, Աշխատակազմի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների ատեստավորման, ինչպես նաև Երևան քաղաքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ ՀՈԱԿ-ներ) և հարյուր տոկոս՝ Երևան քաղաքին սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների (այսուհետ՝ ՓԲԸ-ներ) գործադիր մարմինների (այսուհետ՝ տնօրեններ) ընտրության (նշանակման) մրցույթների (այսուհետ՝ մրցույթներ) և ատեստավորման նախապատրաստական աշխատանքներին (համայնքային ծառայության և ՀՈԱԿ-ների ու ՓԲԸ-ների տնօրենների թափուր պաշտոնների մրցույթների անցկացման համար հայտարարությունների հրապարակում, հայտարարված մրցույթներին մասնակցել ցանկացող քաղաքացիներից փաստաթղթերի ընդունում, մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիների տվյալների գրառում համարակալված մատյանում և այդ տվյալների մուտքագրում համապատասխան համակարգչային ծրագիր, մրցույթին մասնակցելու համար փաստաթղթեր ներկայացնելու ժամկետի ավարտից հետո ոստիկանության մարմիններից հարցման միջոցով դիմած քաղաքացիների դատվածության մասին տեղեկատվության ստացում և այլն).

բ) Աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների, համայնքային ծառայողների ատեստավորումների, ինչպես նաև ՀՈԱԿ-ների, ՓԲԸ-ների տնօրենների մրցույթների և ատեստավորումների անցկացման համար հարցազրույցի փուլի համար նոր կազմված կամ ուղղված հարցաշարերը մուտքագրում է «Մինի էդիտոր» կոչվող ծրագրում.

գ) համայնքային ծառայության, ինչպես նաև ՀՈԱԿ-ների, ՓԲԸ-ների տնօրենների յուրաքանչյուր պաշտոնի համար կազմված և «Մինի էդիտոր» կոչվող ծրագիր մուտքագրված հարցազրույցի փուլի հարցաշարերը կցում է մրցութային ու ատեստավորման հարցազրույցի փուլի անցկացման համար նախատեսված ծրագրին:

դ) իրականացնում է Երևանի քաղաքապետի կողմից ստորագրված որոշումների բնօրինակների պահպանության և առաքման հանձնելու աշխատանքները.

Բաժնի առաջատար մասնագետն ունի Օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

Բաժնի առաջատար մասնագետը՝

ա) ունի միջնակարգ կրթություն՝ առանց աշխատանքային ստաժի և փորձի.

բ) ունի աշխատանքային օրենսգրքի, «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Համայնքային ծառայության մասին» օրենքների, աշխատանքային օրենսդրության, Աշխատակազմի և Վարչության կանոնադրությունների ու իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) տիրապետում է ՀՀ տարածքային կառավարման նախարարի 29.08.2006թ. «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին» հ. 13-Ն, ՀՀ տարածքային կառավարման նախարարի 11.09.2006թ. «Համայնքային ծառայողի ատեստավորման կարգը սահմանելու մասին» հ. 15-Ն, ՀՀ տարածքային կառավարման նախարար-փոխվարչապետի 04.12.2008թ. «Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցելու և կադրերի ռեզերվից հանելու կարգը հաստատելու մասին» հ. 02-Ն, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 26.03.2020թ. «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատելու մասին» հ.02-Ն հրամաններին:

դ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

ե) ունի համակարգչով (Microsoft office ծրագրային փաթեթ) և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցներից մեկի) կողմից զբաղեցնելը:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2021 թվականի հունիսի 3-ը, ժամը 10:00:
Դիմումներն ուղարկել միայն էլեկտրոնային տարբերակով՝ e-request.am էլեկտրոնային հասցեին:

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ (ք.Երևան, Կառավարական տուն N 3, հեռ. 010515133):

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: